«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության որակավորման հանձնաժողովի նիստի 2026թ. հոկտեմբերի 28-ի նիստի թիվ 24/26 արձանագրությունից

. . .

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և անցկացված քննարկումների հիման վրա և առաջնորդվելով Պալատի խորհրդի 2021 թ. դեկտեմբերի 2-ին ընդունված թիվ 70-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգով՝ Հանձնաժողովը քվեարկությամբ միաձայն (կողմ՝ 6, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա) որոշեց.

. . .

3.1. *Հավանություն տալ IAB Բիզնեսի Միջազգային Ակադեմիայի առցանց և Այ Էյ Բի ակադեմիայում կազմակերպած սփորև նշված դասընթացները որպես ՇՄԶ համարելուն՝ որպես ՇՄԶ կարգի 3.1.3. կետով նախատեսված միջոցառումներ.*

Դասընթացի (սեմինարի) թեմա	Տևողություն	Դասընթացավար	Ամսաթիվ
Ֆինանսներ ոչ ֆինանսական ղեկավարների համար	8 ժամ	Հայաստան Խաչատրյան	04.11.2026-13.11.2026
Կամուրջներ, ոչ թե պատեր. համաձայնության հասնելու արվեստը	6 ժամ	Արմեն Ղուկասյան	16.11.2026-18.11.2026

. . .

3.5. *Սահմանել, որ որպես ՇՄԶ համարելուն հավանություն տալու վերաբերյալ կայացված վերը բերված թիվ 3.1.,3.2. որոշումները վավեր են՝ պայմանով, որ դասընթացները փաստացի անցկացվեն այն անձանց կողմից, ում CV-ն որպես փվյալ միջոցառման դասընթացավարի, ներկայացվել է հանձնաժողովին՝ հավանություն ստանալու նպատակով, ինչպես նաև դասընթացների անցկացման կոնկրետ ժամանակացույցի և վայրի ու դրանց հետագա փոփոխությունների (եթե այդպիսիք լինեն) մասին նախապես հայտնեն Հանձնաժողովին:*

Հանձնաժողովի նախագահ՝ *Ա. Հարությունյան*

Քարտուղար՝ *Գ. Ափուրյան*